ԿԱՐԾԻՔ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 12-րդ դասարանի սովորող Արթենի Ջանիկյանի՝ «Հրավիրյալ մասնագետների հետ համագործակցության կրթական հետևանքները» հետազոտական աշխատանքի վերաբերյալ

Թեման արդիական է և՛ որպես տեսական հիմնահարց, և՛ որպես միջոց կրթական գործընթացի արդյունավետացման և բազմազանեցման տեսանկյունից:

Ավանդական կրթական համակարգի, ավանդական կրթության գերակայության պայմաններում կրթության միատեսակության հաղթահարման կարևոր բաղադրիչ է նաև այս գործիքի կիրառումը կրթության և հասարակական զարգացման ներպետական և արտասահմանյան օրինաչափությունների վրա զարկերակը պահելու, ինչպես նաև ստացած տեսական գիտելիքները պրակտիկ հասարակական և քաղաքական գործընթացների վերլուծության մեջ օգտագործելու տեսանկյունից:

Սա մի գուցե հարաբերականորեն նոր, բայցև կարևոր կրթական մշակույթ է ոչ միայն կրթական բաղադրիչի տեսանկյունից, այլև՝ հասարակական կյանքին ներգրավվածության մոտիվացիայի առումով:

Սովորողը կատարել է բավարար աշխատանքը՝ ներկայացնելու հրավիրյալ դասախոսների հետ ունեցած հանդիպումները, խոսել դրանց արդյունավետության հարցերի մասին: Աշխատանքում արված դատողությունները և առաջարկությունները՝ ուղղված հրավիրյալ դասախոսների հետ հանդիպումների արդյունավետության բարձրացմանը, տրամաբանական են և հիմնավոր:

Որպես առաջարկ՝ կարող եմ ավելացնել. խուսափելու համար ֆորմատի ռիսկային ձևայնացումից՝ կարելի է հանդիպումները կազմակերպել կոնկրետ շրջանակի ուսանողների համար, կոնկրետ տարիքային խմբերի ուսանողների համար:

Կարծում եմ՝ կատարված հետաքաքիր աշխատանքի արդյունավետության տեսանկյունից խիստ անհրաժեշտ կլիներ ուսումնասիրել նաև տարբեր երկրներում նման փորձերը, ինչը անպայմանորեն կնպաստեր և կհարստացներ աշխատանքը:

Վերջում, նշեմ, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 12-րդ դասարանի սովորող Արթենի Ջանիկյանը կատարել է բավարար և մանրակրկիտ աշխատանք, առավելագույնս փորձել է էմպիրիկ նյութով բացահայտել թեմայի էությունը, իսկ աշխատանքը արժանի է բարձր գնահատականի:

Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Սուքիասյան
02.04.2024